ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

4 ապրիլի 2016 թվականի թիվ 46 - Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶՊԵՏԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 25-Ի N 7-Ա ՈՐՈՇՄԱՆ ՀԱՎԵԼՎԱԾԸ ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 2-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության վարչապետի 2016 թվականի մարտի 30-ի՝ «Հայաստանի Հանրապետության վարչապետի 1998 թվականի նոյեմբերի 6-ի N 620 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» N 222-Ն որոշումը՝

ո ր ո շ ու մ ե մ.

1. Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2016 թվականի հունվարի 25-ի «Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետարանի հաստիքացուցակը նոր խմբագրությամբ հաստատելու և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետի 2015 թվականի հունվարի 23-ի N 6-Ա որոշումը ուժը կորցրած ճանաչելու մասին» N 7-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի :

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և տարածվում է 2016 թվականի մարտի 30-ից հետո ծագած հարաբերությունների վրա:

Հ.ԱԲՈՎՅԱՆ

2016թ. ապրիլի 4
ք.Իջևան